

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Աստուած կը
պատուէ
Յովսէփը՝
գերիս



Written by: Edward Hughes

Illustrated by: M. Maillot; Lazarus

Adapted by: M. Maillot; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Յովսէփ անարդարօրէն
բանտարկուած էր իր
նախկին վարպետին
Պետափրէսի
հրամանով:
Բանտին մէջ
Յովսէփ շատ
հնազանդ էւ
օգնող էր:



Բանտապահը Յովսեփին կը
վստահեր, որպեսզի բանտին
մէջ կեանքը կազմակերպէ,
որովհետեւ Աստուած
Յովսեփին հետ էր, բանտը
բանտարկեալներուն
համար աւելի լաւ
ապրելու տեղ
դարձաւ:




Թագաւորին փռապանը եւ
մատակարարն ալ բանտն
էին: "Ինչու այսքան տխուր
էք" օրին մէկը հարցուց
Յովսէփ:



"Մեկը չի կրնար բացատրել
մեր երազները", ըսին
փորձանքի մատնուած
մարդիկը:




"Աստուած կրնայ",
ըսաւ Յովսէփ, "իսծի
ըսէք ձեր երազները":



"Ձեր երազները կը նշանակէ, թէ երեք օր ետք
թագաւոր փառաւոնին ծառայութեան ետ պիտի
դառնաք", ըսաւ Յովսէփ մատակարարին: "Յիշէ՛

ինծի եւ փառաւոնին
ըսէք, որ ազատ
արձակէք ինծի":
Փռապանին երազը
գէշ լուր ունէր. "Դուն
երեք օր ետք պիտի
մեռնիս", ըսաւ
Յովսէփ:
Երկու
երազներն ալ
իրականացան:



Բայց մատակարարը մոռցավ


Յովսեփին մասին մինչեւ օր մը

փառաւոն իրար անցած

արթնցավ: "Երազ մը

տեսայ", ան

պոռաց, իր



խելացի
մարդոցմէ
ոչ ոք կրցավ

բացատրել այդ երազը:
Մատակարարը յիշեց, որ
Յովսեփը բանտին մէջն է:
Ան փառաւոնին պատմեց
անոր մասին:



Անմիջապես փառաւոն Յովսէփը
բերել տուաւ: "Քու երագդ Աստուծմէ լուռ
մըն է", ըսաւ Յովսէփ թագաւորին: "Եգիպտոս
եօթը տարի առատութիւն պիտի ունենայ, յետոյ
եօթը տարի սարսափելի սով պիտի տիրէ":



"Յիմակուրնէ
պատրաստուեցէք,
որպէսզի ուտելիք
ամբարէք
այս լաւ եօթը
տարիները",
Յովսէփ
պատուիրեց
փառաւոնին,
"Եթէ ոչ
ժողովուրդդ
սովի մէջ
պիտի
մեռնի":



"Աստուած հետդ է",
ըսաւ փառաւոն. "Դուն
Եգիպտոսի վրայ
կառավարիչ
պիտի ըլլաս
իմ կողքիս":



Եօթը բարգաւաճ տարիներ եկան: Եօթը տարիներ
ալ սով: Ուտելիքը շատ հազուադիւտ էր ամէն տեղ
բացի Եգիպտոսէն, ուր խոհեմօրէն մեծ քանակով
ուտելիք ամբարուած էր: Յովսէփին հեռու
հայրենիքին մէջ Յովսէփին ընտանիքը



Կը
տառապէր:



Ամբողջ ժողովուրդը եգիպտոս կու գար,
որպեսզի ցորեն գնեն: "Դո՛ւք ալ պետք է
երթաք", հրամայեց Յակոբ
իր զաւակներուն,
"Եթէ ոչ մինչեւ
մահ սոյն
պիտի
մեռնիք", ...





... Եգիպտոս հասնելուն տղաքը
պատրաստուեցան կերակուր գնելու:



Յակորբին տղաքը մինչեւ գետին
խոնարհեցան, մեծարեցին,
որովհետեւ Եգիպտոսի
պատասխանատուն էր: Անոնք
չ'անդրադարձան, որ Յովսեփ
իրենց եղբայրն է: Սակայն
Յովսեփ ճանչցաւ անոնց:



Յովսէփ յիշեց
իր տղայութեան
երազները: Աստուած
իրեն բարձրացուց
իր եղբայրներէն
աւելի վեր:



Յովսէփը շատ խոհեմ էր:
Ան կոշտօրէն խօսեցաւ
եւ Սիմոն եղբայրը
պատանդ առաւ:



"Ուտելիք առէք, տուն գացէք եւ
վերադարձէք ձեր նորաստի
եղբօր հետ" հրամայեց ան:
"Յետոյ կը գիտնամ, որ
լրտեսներ չէք":



Եղբայրները մտածեցին, թե
Աստուած կրնայ ըլլալ, որ իրենց
կը պատժէ, որովհետեւ
տարիներ առաջ Յովսէփը
ծախեցին:



Յակոբ եւ իր տղաքը շուարած էին:
"Մեր դրամը ետ դարձաւ հատիկով եւ
կառավարիչը ըսաւ, որ մենք պետք
է Բենիամինը բերենք" Յակոբ
չէր կրնար Բենիամինը դրկել:



Սակայն շուտով կերակուրը սպառեցաւ,
եղբայրները անգամ մը եւս Եգիպտոս
պիտի երթային: Բենիամինը
հետերնին ընկերակցեցաւ:



Երբ Յովսեփը տեսաւ Բենիամինը ան իր
ծառաներուն հրամայեց, որ մեծ խրախճանք մը
սարքեն: Եղբայրները բոլորն ալ հրաւիրուած էին
"Ձեր հայրը ողջ առողջ է", հարցուց Յովսեփ:
Թերեւս ան կը մտածեր, որ ինչպէս միացնէ
ընտանիքը:



Յովսէփն ալ կ'ուզէր
գիտնալ, որ իր
եղբայրները իրաւ
զղջացած են իրենց
գործած մեղքին
համար, բաւական
տարիներ առաջ:

Երախճանքէն
ետք ան անոնց
գողութեան
յանցանքով
ամբաստանել.



"Ձեզի պատժելու համար ես
Բենիամինը քոյս գերի պիտի
ձգեմ", ըսաւ Յովսէփ:
"Տեր իմ, մեզի մեռցուր
անոր տեղ", աղաչեց
Յուդան: Յովսէփը
գիտցաւ, որ Յուդան,
որ ինք առաջարկած

Էր Յովսէփը ծախել
իրաւ փոխուած է:





Այլեւս չէր կրնար իր սերը պահել իր
ընտանիքին հանդէպ: Յովսէփ
ամբողջ եգիպտացիները
դուրս հանեց,
ապա սկսաւ
լալ "Ես
Յովսէփը,
ձեր եղբայրն
եմ,

որուն դուք
եգիպտոս
ծախեցիք":



Ապշած եւ վախով
եղբայրները ոչինչ
արտասանեցին:



Յովսէի
քաջալերեց իր
եղբայրները.



"Աստուած ինձի տեր ըրաւ
Եգիպտոսի վրայ,

որպէսզի
կարենամ ձեր
կեանքը փրկել այս
սովէն: Գացէ՛ք հայրս
հոս բերէք: Ես ձեզի
պիտի հոգամ":



Յակոբ եւ Յովսէփ միացան
Եգիպտոսի մէջ եւ

բոլոր ընտանիքը
ազատութեան եւ
խաղաղութեան
մէջ ապրեցաւ:



Աստուած կը պատուէ Յովսէփը՝ գերին

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 39-45

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"

Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

